COVID -19

DRI

AM

ՈՒՍՈՒՄՆ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԹԵՍՏ. ԱՐԱԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

KYIV, 2020

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս ուսումնասիրությունն իրենից ներկայացնում է COVID-19-ի հետ կապված գործողությունների և հաղորդակցման ռազմավարության, ինչպես նաև Արևելյան գործընկերության վեց երկրներում (Ադրբեջան, Հայաստան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) և Ռումինիայում ապատեղեկատվական սյուժեների ակնարկ: Սա 2018թ. Ապատեղեկատվության անընկալունակունության ինդեքսի տրամաբանական շարունակությունն է և արդիական լրացումը, որը հրապարակվել է «Ուկրաինական պրիզմա» Արտաքին քաղաքականության խորհդի կողմից:

Այս հետազոտության նպատակն է փորձարկել 2018-ին ազգային փորձագետների կողմից արված որոշ ենթադրություններն ու վերլուծել, թե ինչպես է զարգանում պետությունների անընկալունակունությունը ապատեղեկատվության և թերտեղեկատվության նկատմամբ: COVID-19-ի համաճարակի հետ կապված ապատեղեկատվության անկառավարելի հեղեղը իրենից փորձարկում է ներկայացնում պետական ապատեղեկատվության անընկալունակունության համար: Բացի դրանից, ուսումնասիրության նպատակն է COVID-19-ի մասին ապատեղեկատվական գործունեության հնարավոր սպառնալիքների և պետության անընկալունակունության հետ կապված լայն լսարանի իրազեկվածության բարձրացումը:

Չնայած երկրներն ակնհայտորեն կենտրոնացած են կորոնավիրուսի բռնկման հետ կապված մարդասիրական և առողջապահական խնդիրների կառավարման վրա, տեղեկատվական ոլորտը նույնպես լարվածության մեջ է: Որքանով մեր վերլուծությունն է հուշում, չնայած ապատեղեկատվության աղբյուրները կարող են տարբեր լինել (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին), դրանց հետևանքները միմյանց նման են և կարող են խուճապ առաջացնել, կառավարության գործունեության հանդեպ անվստահություն և ճգնաժամի սխալ վարում:

Վերլուծության տրամաբանական շրջանակը կառուցված է երեք հիմնական բաղադրիչների շուրջ՝ երկրի գլուխներ, ապատեղեկատվական սյուժեներ և ցուցիչ: Յոթ երկրներում տեղական փորձագետները վերլուծել են 6 ամսվա ընթացքում (2020 թ. փետրվար-հուլիս) ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կառույցների (ներառյալ լրատվամիջոցների և կրոնական կազմակերպությունների) գործողությունները, հայտարարություններն ու նախաձեռնությունները, ինչպես նաև հասարակության և լրատվամիջոցների դիսկուրսում ներկայացված սյուժեները:

Վերլուծությունը ցույց տվեց, որ նույնիսկ եթե երկրների մեծամասնությունում COVID-19-ի առաջին դեպքերը հայտնաբերվել էին մարտ ամսին, ապատեղեկատվության ու դավադրության տեսությունները տարածվում էին հունվար-փետրվար ամիսներից: Այդ ապատեղեկատվական սյուժեները համաշխարհային միտման մասն էին կազմում և հիմնականում կրում էին աշխարհաքաղաքական բնույթ՝ կապված Չինաստան-ԱՄՆ երկխոսակցության կամ անհայտի հանդեպ վախի հետ:

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ արտակարգ դրության ռեժիմ մտցնելը գրեթե չի ազդել ապատեղեկատվության տարածման վրա: Ապատեղեկատվության հոսքի վրա ազդող հիմնական գործոններից մեկը ժամանակին և բավարար լինելն էր, ինչպես նաև համակարգված տեղեկատվության տրամադրումը կառավարության համապատասխան մարմինների կողմից: Հենց լրատվամիջոցներն ու հասարակությունը տեղեկատվության բաց հասանելիություն ստացան պարբերական ճեպազրույցների, պաշտոնական կայքերի և այլնի միջոցով, տեղեկատվական վակուումը լրացվեց՝ ավելի քիչ տեղ թողնելով բամբասանքների ու շահարկումների համար:

Լրատվամիջոցները լուրջ դեր խաղացին ինչպես ապատեղեկատվության տարածման, այնպես էլ այն բացահայտելու մեջ: Դժբախտաբար, որոշ երկրներում լրատվամիջոցներն իրենց սեփականատերերի քաղաքական նախասիրությունների կամ սկզբնական փուլում համաճարակային պատմությունները լուսաբանելու համար անհրաժեշտ հատուկ գիտելիքների բացակայության պատանդը դարձան: Իրավիճակն ավելի լավ էր այն երկրներում, որտեղ կան Վարքի օրենսգիրք և ՁԼՄ-ների ինքնակարգավորման նորմեր, և միևնույն ժամանակ ավելի բարդ էր այն երկրներում, որտեղ լրատվամիջոցները գլխավորապես գտնվում էին պետության վերահսկողության տակ:

Բոլոր երկրները բախվել էին ապատեղեկատվության տարածումը կանխելու անհրաժեշտության (արգելափակելով դրանք շրջանառող որոշ առցանց ռեսուրսներ կամ նորություններ) և ազատ խոսքի ու լրատվամիջոցների գործունեության իրավունքի միջև հավասարակշռության հասնելու խնդրին: Այնուամենայնիվ, կառավարական քննադատության մակարդակը, հնարավոր է, փոխկապակցված էր համապատասխան երկրներում ժողովրդավարության մակարդակի և կառավարության գործողությունների նկատմամբ վստահության մակարդակի հետ: Օրինակ՝ Ադրբեջանում և Բելառուսում նախկինում բազմաթիվ անգամներ եղել են իշխանությունը չարաշահելու և արգելափակումը որպես ընդդիմության պատժամիջոց օգտագործելու դեպքեր, հետևաբար ցանկացած նոր սահմանափակում ընկալվել է լրացուցիչ ճնշման տեսանկյունից: Մինչդեռ Ուկրաինայում հասարակությունը ընդունեց անվտանգության ծառայությունների կողմից Facebook-ի որոշ էջեր արգելափակելու անհրաժեշտությունը որպես ապատեղեկատվության տարածումը կանխելու անհրաժեշտ քայլ, քանի որ նախկինում նման գործողությունները հիմնականում կապված են եղել ռուսական կամ անջատողական քարոզչությունը կանխելու հետ:

Ռումինիան, Ուկրաինան և Վրաստանը ամենաբարձր տեղերն են զբաղեցնում կայունության, հասարակության և կառավարության արձագանքելու տեսանկյունից, թեև դեռևս չեն հասել բարձր ցուցանիշների: Միևնույն ժամանակ, ամենացածր ցուցանիշները գրանցել են Ադրբեջանը, Բելառուսն ու Մոլդովան: Կառավարության արձագանքի առումով Վրաստանը ստացել է ամենաբարձր գնահատականը (9-ից 6), որին հաջորդում է Ուկրաինան (9-ից 5), իսկ Մոլդովան՝ ամենացածրը (0): ՁԼՄ-ները իրենց ամենալավը դրսևորել են Ռումինիայում (3-ը 4-ից) և ամենավատը՝ Բելառուսում (1-ը 4-ից): Քաղաքացիական հասարակության արձագանքն ամենաակտիվն էր Ուկրաինայում և Ռումինիայում (8-ից 7՝ երկու երկրների համար) և ամենապասիվը՝ Ադրբեջանում ու Բելառուսում (8-ից 1՝ երկու երկրների համար):

ՍՅՈՒԺԵՆԵՐ

Ինչպես ցույց է տվել ուսումնասիրությունը, չնայած ռուսական սյուժեները կայունորեն զբաղեցնում են հասարակական դիսկուրսը, համաճարակի ընթացքում Ռուսաստանի Դաշնությունը ապատեղեկատվության միակ աղբյուրը չէր՝ բավարար տեղ թողնելով գլոբալ և ներքին սյուժեների ստեղծման համար: Այնուամենայնիվ, ռուսախոս բնակչությունն ամենախոցելին էր մնում ապատեղեկատվության հանդեպ:

Համաճարակի ընթացքում շրջանառվող և ուսումնասիրված բոլոր երկրներում հայտնաբերված ապատեղեկատվական սյուժեների մեծ մասը կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- առողջության հետ կապված (օրինակ՝ ախտանիշներ, ախտորոշում, բուժումներ);
- աշխարհաքաղաքական ուղղվածության (օրինակ՝ երրորդ պետությունների գործողությունները կամ ազդեցությունը, արտաքին քաղաքականությանն առնչվող գործողությունները, արտաքին օգնությունը);

- կառավարության հետ կապված (օրինակ՝ ժողովրդավարության և մարդու իրավունքների սպառնալիքներ, «ձախողված» կառավարություններ, քաղաքական ճեղքեր և այլն);
- դավադրական տեսություններ (օրինակ՝ 5G ցանց, նպատակաուղղված կերպով ստեղծված կենսաբանական զենք, Բիլ Գեյթսի կողմից ստեղծված վիրուս և այլն):

ԱԴՐԲԵՋԱՆ

Ադրբեջանում ապատեղեկատվական արշավներն իրենց արմատներն ունեին ինչպես գլոբալ, այնպես էլ ազգային մակարդակներում, մինչ իշխանությունները հիմնականում սխալ էին կառավարում իրավիճակը: Ռուսաստանում գործող պետական լրատվամիջոցներից և հետազոտական կենտրոններից ստացված տեղեկատվությունը շարունակում է մնալ COVID-19-ի ապատեղեկատվության հիմնական աղբյուրը ռուսալեզու համայնքի՝ որպես երկրի ամենախոցելի խմբի մոտ: Անկախ լրատվամիջոցներն ու քաղաքացիական հասարակությունը անչափ սահմանափակվեցին երկրի ընդհանուր քաղաքական իրավիճակի պատճառով: Կառավարության կողմից սահմանված խիստ սահմանափակող միջոցները խիստ քննադատության ենթարկվեցին և ոչ մի դրական ազդեցություն չունեցան Ադրբեջանի հասարակության կողմից ապատեղեկատվության նկատմամբ անընկալունակության վրա: Չնայած այն հանգամանքին, որ բարձրաստիճան իշխանավորները փաստեր և հիմնական տեղեկություններ էին տրամադրում, նրանց մոտ բացակայում էր ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության հարցերի համար բաց լինելը՝ այդպիսով ստեղծելով տեղեկատվական վակուում: Կրոնական հավաքույթների անցկացման հետ կապված սկզբնական խառնաշփոթը չհանգեցրեց հասարակությանը մոլորության մեջ գցող տեղեկատվության: Կրոնական համայնքները, ներառյալ նրանց առաջնորդները, ակտիվ չէին ոչ տեղեկատվական դիսկուրսում, ոչ էլ ապատեղեկատվություն տարածման հարցում: Հիմնական սյուժեները փոխվում էին համաճարակի զարգացմանը զուգընթաց՝ սկսած աշխարհաքաղաքական պատմություններից (զեկույցներ ԱՄՆ-ի կողմից COVID-19-ը որպես կենսաբանական զենք ստեղծելու և Եվրոմիության կազմալուծման մասին) մինչև համաճարակի պիկն ընկած ժամանակահատվածը՝ գնահատելով կառավարության այսպես կոչված «հաջողությունները» համաճարակի դեմ պայքարում՝ պնդելով, որ աշխարհում ուսումնասիրվում է կորոնավիրուսի դեմ միջոցների ու պայքարի «ադրբեջանական փորձը»:

ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայաստանը ականատես եղավ հակակառավարական սյուժեների լուրջ շարքի, որոնք կապված էին երկրում առկա ընդհանուր քաղաքական մրցակցության հետ, երբ ապատեղեկատվություն հիմնականում տարածում էին քաղաքական ընդդիմախոսները՝ խաթարելու համար հայկական կառավարության հանդեպ վստահությունը: Կառավարության նախնական պատասխանն արտահայտվեց փոխվարչապետի՝ որպես կենտրոնական դեմքի նշանակմամբ, ինչպես նաև Առողջապահության նախարարության կողմից տրամադրված համակարգված թարմացումներով: Կանոնավոր ճեպազրույցները դրական ազդեցություն ունեցան տեղեկատվության վակուումը լրացնելու համար: Այնուամենայնիվ, համաճարակի սխալ կառավարման և տվյալների գաղտնիության խնդիրները ստվերեցին նախնական դրական արձագանքը: Հայաստանում լրատվական դաշտի բարձր քաղաքականացումը իր բացասական ազդեցությունն ունեցավ: Սոցիալական մեդիայի առումով նշանակալից ազդեցություն ունեցան (նախկին) բժիշկ-բլոգերները, որոնք իրար խառնեցին քաղաքականությունն ու բժշկությունը և ապատեղեկատվություն տարածեցին վիրուսի մասին: Քաղաքացիական հասարակությունն ունեցավ ինչպես

դրական, այնպես էլ բացասական արձագանքներ և մասնակցեց ինչպես ապատեղեկատվության տարածմանը, այնպես էլ դրա բացահայտմանը: Հայաստանում տարածված հիմնական սյուժեները եղել են դիմակներն ու կարանտինային միջոցները քննադատող սյուժեները, կառավարության նկատմամբ անվստահության ստեղծումը, վիրուսի տարածման հարցում Ջորջ Սորոսի դերին անդրադարձը:

ԲԵԼԱՌՈՒՍԻ

Բելառուսի դեպքն ունի իր առանձնահատկությունները, քանի որ սա միակ երկիրն է, որտեղ կարանտին և արտակարգ դրություն չեն մտցվել: Բացի դրանից, համաճարակը զարգացել է շատ լարված նախընտրական քարոզարշավին զուգընթաց: Այսպիսով, կառավարությունն ու բարձրաստիճան պաշտոնյաներն իրենք, ռուսական տեղեկատվական աղբյուրների հետ միասին, դարձան ապատեղեկատվության հիմնական աղբյուրներից մեկը: Համաճարակի տարածման առաջին փուլում Մինսկի տեղեկատվական քաղաքականությունը հիմնականում կենտրոնացած էր բնակչության շրջանում խուճապը կանխելու վրա՝ համաճարակաբանական իրավիճակի վերաբերյալ շատ սահմանափակ տվյալների հրապարակմամբ և վարակի ռիսկի նսեմացմամբ: Նախագահ Լուկաշենկոն դարձավ սխալ տեղեկատվության գլխավոր լրատուն: Սա հանգեցրեց տեղեկատվական վակուումի և բամբասանքների տարածմանը COV-ID-19-ի շուրջ իրական իրավիճակի վերաբերյալ: Անկախ լրատվամիջոցները և ընդդիմադիր քաղաքական գործիչները քննադատեցին կառավարության գործողությունները և փորձեցին տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներ ներկայացնել: Դա օգտագործվեց որպես ընդդիմադիր լրատվամիջոցների դեմ հարձակումների պատճառ: Բելառուսում կարանտին չլինելու պայմաններում քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ու խմբերը ավելի շատ ներգրավված էին սոցիալական հեռավորության խստացված միջոցներ քարոզելու և բժշկական անձնակազմին ու հիվանդանոցներին օժանդակելու, քան բացահայտումների գործունեության մեջ: Հիմնական սյուժեները վերաբերում էին COV-ID-19-ի վտանգը ժխտելուն, որպես ճգնաժամի պատճառի Չինաստանի ու ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական մրցակցությանը և տարբեր քաղաքներում բարձր մահացության մասին բամբասանքներին:

ՎՐԱՍՏԱՆ

Վրաստան: Վրաստանում կառավարական արձագանքը ամենահաջողներից մեկն էր, ինչը հանգեցրեց ինչպես լավագույն համաճարակային իրավիճակին, այնպես էլ հաղորդակցության լավ ռազմավարության: Այնուամենայնիվ, համաճարակի ընթացքում քաղաքական ճգնաժամը և սպասվող խորհրդարանական ընտրությունները բացասական ազդեցություն ունեցան տեղեկատվական միջավայրի վրա: Վրաստանի համար ամենամեծ մարտահրավերը կարանտինային միջոցառումների և այլ սահմանափակումների հաղորդումն էր ազգային փոքրամասնություններին (ադրբեջանական և հայկական համայնքներ), որոնք հանգեցրին մի շարք միջադեպերի: Վրաստանի կառավարության կողմից Միջգերատեսչական համակարգող խորհրդի ստեղծումն իր դրական արդյունքն ունեցավ, հաշվի առնելով կարևոր տեղեկատվության տրամադրումը, ամենօրյա ճեպազրույցների կազմակերպումը, հատուկ կայքերի և թեժ գծի ստեղծումը: Լրատվամիջոցների տեսանկյունից կարելի էր նկատել ռուսական լրատվամիջոցների և ռուսական ապատեղեկատվությունը կրկնող Վրաստանի գրավյալ տարածքների հետ կապված խնդիրը: Այս ապատեղեկատվության մեծ մասը կապված էր Վրաստանում ԱՄՆ լաբորատորիաների վերաբերյալ կեղծ լուրերի հետ, որոնք, իբր, «ստեղծել

են COVID-19-ը»: Հակաամերիկյան, հակաազատական, հակակարանտինային սյուժեները եղել են ամենատարածվածը:

ՄՈԼԴՈՎԱ

Մոլդովա: Մոլդովայում համաճարակային արձագանքը և դրա լուսաբանումը լրատվամիջոցներում խիստ քաղաքականացված են: Երկրում ընդհանուր քաղաքական մրցակցությունն իր բացասական ազդեցությունն ունեցավ և հանգեցրեց ապատեղեկատվության և տեղեկատվության շահարկման մակարդակի բարձրացման: Նկատվեցին ռուսական ու չինական ապատեղեկատվական արշավներն ու լրատվամիջոցների ազդեցությունը: Մարտին ներկայացված Մոլդովայի Արձագանքման ծրագիրն ուներ հաղորդակցական բաղադրիչ, որը ներառում էր լրատվամիջոցներ և սոցիալական լրատվամիջոցներ, բարձրաստիճան պաշտոնյաների ճեպազրույցներ, թեժ գծեր ու կայքեր: Երկրում COVID-19-ի իրավիճակի մասին հաղորդակցությունն իրականացվում էր օրական երկու անգամ՝ համաճարակային աշխատանքային խմբի անունից: Այնուամենայնիվ, Մոլդովայի բնակչության ընդհանուր ցածր վստահությունը կառավարության նկատմամբ և տրամադրված տեղեկատվության ու իրական փաստերի միջև անջատումը հանգեցրեցին պաշտոնական տեղեկատվության բացասական ընկալմանը: Բացի դրանից, նախագահն ու կառավարությունը հակասական տեղեկություններ էին տրամադրում: Լրատվամիջոցների առումով, ռուսական լրատվամիջոցների և ռուսական հեռուստաալիքների զգալի ներկայությունը լուրջ բացասական ազդեցություն ունեցավ, որը ներառում էր և՛ կեղծ լուրեր, և՛ քարոզչություն: Եկեղեցին ապատեղեկատվության աղբյուրներից մեկն էր, ներառյալ կեղծ լուրերի տարածումը 5G-ի և վիրուսի ծագման մասին (սյուժեների մեծ մասը նման էր Ռուսաստանի Ուղղափառ եկեղեցու կողմից տարածվածներին): Մոլդովայում հիմնական սյուժեները վերաբերում էին բուժման մեթոդներին, ապաքինման անհնարինության վախերին, ինչպես նաև դավադրության տեսություններին (բնակչության չիպավորում, 5G, ամերիկյան լաբորատորիաներ): Ավելին, առկա էր աշխարհաքաղաքական դիսկուրս, որը հիմնականում ասում էր՝ «մահն եկել է Արևմուտքից, իսկ օգնությունը գալիս է Ռուսաստանից ու Չինաստանից»:

ՌՈՒՄԻՆԻԱ

Ռումինիա: Covid-19-ի համաճարակի հավանականության առջև կանգնելով՝ Ռումինիայի իշխանություններին հաջողվեց միջոցառումների խճանկար ի մի բերել՝ կանխելու վիրուսի տարածումը, և նրանք փորձեցին բնակչությանը տեղեկացնել աճող ռիսկի մասին: Այնուամենայնիվ, հասարակության արձագանքը խառն էր, մինչդեռ կառավարության արձագանքը տարակուսելի ազդեցություն ունեցավ բնակչության մասերի վրա: Այս ֆոնի վրա ռումինական տեղեկատվական տարածքը ենթարկվեց անընդմեջ ապատեղեկատվական ալիքների հարվածների: Սյուժեների շարքում դավադրության տեսությունները Ռումինիայում ամենատարածվածն են եղել՝ կապված վիրուսի ծագման և 5G ցանցի չարամիտ ազդեցության հետ: Ապատեղեկատվության առավել ակնհայտ աղբյուրներից են եղել Մոլդովայի Հանրապետությունում հիմնվող կայքերը: Հետազոտության արդյունքում եզրակացություն է արվել, որ Ռումինիային հարվածած ընթացիկ ապատեղեկատվական արշավների համար միայն Ռուսաստանին մատնանշելը չափազանց պարզունակ կլիներ, քանի որ Ռուսաստանի Դաշնության հետ հստակ կապ չունեցող ներքին սուբյեկտները նույնպես կարող են շահագրգռված լինել ապատեղեկատվություն և այլընտրանքային պատմություններ տարածելու մեջ համանման նպատակներով՝ թուլացնելու վստահությունը ինստիտուտների նկատմամբ և խուճապ սերմանելու:

ՈՒԿՐԱԻՆԱ

Ուկրաինա: Մանիպուլացված տեղեկատվությունը, օգտագործելով հուզականության և ռացիոնալության խառնուրդը, 2014-ից սկսած համատարած և գերակշռող դարձավ Ուկրաինայում և բյուրեղացավ 2020-ի համաճարակային ճգնաժամի պայմաններում: Ռուսաստանի հետ տեղեկատվական պատերազմի համեմատաբար երկար փորձը, ինչպես նաև բացահայտման ու տեղեկատվական անվտանգության ՀԿ-ների առկայությունը ապահովեցին ուկրաինացիների որոշակի անընկալունակություն ապատեղեկատվության և կեղծ լուրերի նկատմամբ: Կառավարության արձագանքը գոհացուցիչ էր տրամադրված ամենօրյա տեղեկատվության և հատուկ կայքերի ստեղծված լինելու պայմաններում: Անվտանգության ծառայությունները նույնպես մասնակցում էին ապատեղեկատվության տարածումը կանխելու գործին, հատկապես՝ սոցիալական ցանցերում: Լրատվամիջոցները պակաս դիմացկուն եղան մի քանի գործոնների պատճառով. մեդիայի լանդշաֆտի քաղաքականացումը, մասնագիտական գիտելիքի բացակայությունը, ռուսական ազդեցությունը և չստուգված անհայտ աղբյուրներին հղումը: Միևնույն ժամանակ, եղան դրական օրինակներ, երբ լրատվամիջոցները հատուկ լուսաբանում էին իրականացնում տեղեկատվական բացերը լրացնելու և COVID-19-ի վերաբերյալ առասպելները հերքելու համար: Ուկրաինայում քաղաքացիական հասարակությունը դարձավ առավել դիմացկուն ու պատրաստված և ակտիվ աշխատում էր բոլոր ուղղություններով՝ համարժեք տեղեկատվության տրամադրում, առասպելների հերքում, փաստերի ստուգում և այլն: Ուկրաինայում տարածված ապատեղեկատվությունը տարբեր էր՝ կախված իրավիճակից: Այն սկսվեց կեղծ լուրերով և դավադրության տեսություններով՝ գիտելիքների պակասի պատճառով՝ ի հավելումն համաճարակի դեմ պայքարում օտարերկրյա աջակցության մասին աշխարհաքաղաքական սյուժեների: Ամենատարածված ապատեղեկատվությունը վերաբերում էր վիրուսի ծագմանը (ներառյալ «Ուկրաինայում ԱՄՆ լաբորատորիաները») և բուժման մեթոդներին, ինչպես նաև Ջորջ Սորոսի դերին համաճարակն առաջացնելու հարցում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մասնագետները մշակել են հետևյալ առաջարկությունները, որոնք կարող են կիրառվել ոչ միայն առանձին երկրներում, այլ ամբողջ տարածաշրջանում:

1. Նախարարությունների և գործակալությունների միջև արդյունավետ համակարգում տեղեկատվություն տրամադրելու հարցում՝ վստահությունը մեծացնելու համար՝ թյուրիմացությունից և մոլորեցնող լուրերից խուսափելու նպատակով:
2. Անհրաժեշտ է պետական մակարդակով ապահովել, որ քաղաքացիները ստանան ամբողջական, ճշմարտացի և ժամանակին տրվող տեղեկատվություն համաճարակի մասին՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում, տեղեկատվության հեշտ հասանելիությամբ այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով:
3. Փոխադարձ վստահությունը կարևոր է հասարակության մակարդակում համախմբվածության ու միասնության ապահովման համար: Եվ հակառակը, պետական ինստիտուտների ու քաղաքացիական հասարակության միջև վստահության ցածր մակարդակն ազդում է պետության կայունության վրա:
4. Անհրաժեշտ է խրախուսել մասնագիտական փաստերի ստուգումն ու բացահայտումը ապատեղեկատվության դեմ պայքարելու համար, մասնավորապես առցանց միջավայրում:
5. Բացի ապատեղեկատվության բացահայտումից, հրապարակային ամոթանքի մեթոդը պետք է օգտագործվի ապատեղեկատվություն տարածող անձանց հասցեին: Ապագա ապատեղեկատվության դեպքերը կանխելու համար անհրաժեշտ են համապատասխան միջոցառումները:

COVID-19 DISINFORMATION RESPONSE INDEX

Disinformation Response Index

A

Government Response (maximum 9)

Governmental activities on informing the public and media, fighting disinformation, cooperating with civil society that could either positively or negatively influence the spread of COVID-19 related disinformation.

B

Media Response (maximum 4)

Measures taken by the state and independent media to counter COVID-19 related disinformation and ensure spread of evidence-backed information.

C

Society Response (maximum 8)

Actions by civil society (formal organizations and informal initiatives) to counter COVID-19 related disinformation, ensure spread of evidence-backed information





A

Moldova

Belarus
Azerbaijan
Romania
Armenia

Ukraine
Georgia



B

Belarus

Armenia
Azerbaijan
Georgia
Moldova
Ukraine

Romania



C

Azerbaijan
Belarus

Armenia
Georgia
Moldova

Romania
Ukraine

Coordinator:

Olga Chyzhova

Editor:

Hanna Shelest, PhD

AUTHORS:

Richard Giragosian, Regional Studies Center, Armenia

Najmin Kamilsoy, Charles University, Azerbaijan

Dzianis Melyantsou,Minsk Dialogue Council on International Relations, Belarus

Lasha Tughushi, PhD, Liberal Academy Tbilisi, Georgia

Natalia Stercul, PhD, Foreign Policy Assosiation of the Republic of Moldova, Moldova

Teodor Lucian Moga, PhD, Centre for European Studies, Faculty of Law, Alexandru Ioan Cuza University of Iasi, Romania

Sergiy Gerasymchuk, Oleksanrd Kraiev, Foreign Policy Council "Ukrainian Prism", Ukraine

The research was carried out in Summer, 2020 by the Foreign Policy Council "Ukrainian Prism" (www.prismua.org) in the framework of the project "Coronavirus crush test: Disinformation Resilience of EaP states and Romania", supported by the Black Sea Trust for Regional Cooperation, a Project of the German Marshall Fund of the United States. Opinions expressed in this publication do not necessarily represent those of the Black Sea Trust or its partners.

UKRAINIAN PRISM

COVID -19 DRI Disinformation Response Index